

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԵՆՑ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՌԿԱ
ԳՎՂԱԾԱՐԱԽՈՍԱԿԱՆ
ՔՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Կուսակցությունների գործունեության
համապատասխանությունը իրենց ծրագրերում
առկա գաղափարախոսական բնույթ ունեցող
դրույթներին**

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2021

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յետազոտությունը բացահայտում է հայաստանյան կուսակցությունների գործունեության համապատասխանությունը իրենց ծրագրերում առկա գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին: Յետազոտությունն իրականացվել է «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության նախաձեռնությամբ և «Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ: Յետազոտությունում արտահայտված տեսակետները հեղինակին են, և պարտադիր չէ, որ համընկնեն «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության և «Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի» տեսակետներին:

ՅԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Էդգար Վարդանյան

Քաղաքագետ, հետազոտող

Էդգար Վարդանյանն ավարտել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ ստանալով հետազոտող-դասավանդողի որակավորում: Ստացել է քաղաքագիտության մագիստրոսի աստիճան ՅՅ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնից: Նրա գիտական հետաքրքրության թեմաներն են՝ ժողովրդավարության տեսությունը, ժողովրդավարացման գործընթացները, քաղաքացիական դիմադրությունը, Հայաստանի ներքին քաղաքականությունը, քաղաքական գաղափարախոսությունները: Այդ թեմաներով մի քանի հետազոտությունների հեղինակ է: Որպես անկախ քաղաքական վերլուծաբան՝ Էդգար Վարդանյանը համագործակցել է մի շարք տեղական և միջազգային առաջատար հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ:

Բովանդակություն

1. Նախաբան	4
2. Խորհրդարանական ուժերի քվեարկությունների վերլուծություն	5
2.1 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քվեարկությունների վերլուծություն	5
2.2 «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քվեարկությունների վերլուծություն	8
2.3 «Լուսավոր Հայաստան» կուսակցության քվեարկությունների վերլուծություն	11
3. Արտախորհրդարանական ուժերի հայտարարությունների վերլուծություն	15
3.1 «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ՔՈՍԴԿ) հայտարարությունների վերլուծություն	15
3.2 Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀԅԴ) կուսակցության հայտարարությունների վերլուծություն	18
3.3 Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) կուսակցության հայտարարությունների վերլուծություն	24
3.4 «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունների վերլուծություն	27
3.5 «Սասնա ծռեր» կուսակցության հայտարարությունների վերլուծություն	33
4. Ամփոփում	37

1

Նախաբան

Սույն հետազոտության նպատակն է պարզել՝ որքանով է մի շարք ակտիվ կուսակցությունների գործունեությունը համապատասխանում սեփական ծրագրերում առկա գաղափարախոսական բնույթի դրույթներին:

Այդ նպատակին հասնելու համար ուսումնասիրել ենք խորհրդարանական ուժերի մասով՝ խորհրդարանում նրանց քվեարկությունները, իսկ արտախորհրդարանական ուժերի պարագայում՝ նրանց պաշտոնական հայտարարությունները:

Խորհրդարանական ուժերի մասով ուսումնասիրվել են բոլոր քվեարկված օրինագծերը, և դրանցից առանձնացվել են այնպիսիք, որոնք առերևույթ կարող են պարունակել գաղափարախոսական բնույթի դրույթներ: Դրանց ուսումնասիրման արդյունքում իրենց հերթին առանձնացվել և վերլուծվել են այն օրինագծերը, որոնք պարունակում են գաղափարախոսական բնույթի դրույթներ: Հարկ է նշել, որ այդպիսի օրինագծերը փոքրաթիվ են՝ քվեարկված օրինագծերի բացարձակ մեծամասնությունը չունի գաղափարախոսական բնույթի որևէ բաղադրիչ:

Ուսումնասիրված նյութերի հիման վրա կատարված վերլուծությունները համեմատվել են «ՀՀ կուսակցությունների գաղափարախոսությունները ըստ նրանց ծրագրերի»¹ մեր կատարած հետազոտության արդյունքների հետ: Այս հետազոտությունում ներկայացված է մի շարք ակտիվ կուսակցությունների ծրագրերում առկա գաղափարախոսական բնույթի դրույթների վերլուծությունը: Սույն հետազոտությունը իրականացվել է վերոնշյալ հետազոտության մեթոդաբանության օգնությամբ:

Չետագրուման ենթակա ժամանակահատվածը՝ 2019 հունվար - 2021 մարտ:

1. Վարդանյան, Է. (2020) Հայաստանյան կուսակցությունների քաղաքական գաղափարախոսություններն ըստ իրենց ծրագրերի: [Առցանց] Երևան, «Քաղաքական երկխոսություն» ՀԿ: Հասանելի է. https://www.political.am/storage/uploads/files/arm_print.pdf : [Դիտված 10 հունիս 2021]

2

Խորհրդարանական ուժերի քվեարկությունների վերլուծություն

Ստորև կներկայացնենք, թե որքանով է գաղափարախոսական բաղադրիչ ունեցող օրինագծերի մասով խորհրդարանական կուսակցությունների քվեարկությունը համապատասխանում իրենց ծրագրերում առկա գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

2.1 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քվեարկությունների վերլուծություն

1. Կողմ է քվեարկել **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրինագծին, որը, ըստ ելույթի, կառավարության կառուցվածքի օպտիմալացման նախագիծ է, այսինքն՝ ենթադրում է պետական ապարատի կրճատում: Այս քվեարկությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթի դրույթներին: Օրինակ՝ ԶՊ-ն իր ծրագրում ինդերահարույց երևույթ էր համարել ուճացված պետական կառավարման համակարգը:
2. Կողմ է քվեարկել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծին, որի նպատակն էր «ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացումը, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործումն ու կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծումը»: Նախագծով ներմուծվում էր համահարթ հարկման համակարգ: Թեև ԶՊ-ի ծրագրում չի հստակեցվում, թե ինչպիսի հարկահանման համակարգ է նախընտրում կուսակցությունը, սակայն վերջինում նշվում է հարկային և մաքսային քաղաքականության պարզեցման, շահութահարկի, եկամտային հարկի և շահաբաժինների հարկման գործող դրույթաչափերի նվազեցման անհրաժեշտության մասին, իսկ այդ բոլոր դրույթները առնվազն չեն հակասում համահարթ հարկատեսակի ընդունման քաղաքականությանը:
3. Կողմ է քվեարկել **«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որը տեղական հանրաքվեի ինստիտուտի կիրառման հնարավորություն է տալիս համայնքներին՝ դրանց միավորման կամ բաժանման պարագայում: Այս նախաձեռնությունը առնվազն չի հակասում ԶՊ-ի ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին: ԶՊ-ի ծրագրում նշվում է, որ անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել ուղիղ ժողովրդավարությունը:

4. Կողմ է քվեարկել **«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին»** օրինագծին, որի նպատակներն են «ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումն որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը»: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթին, որոնցում կարևորվում է «հոգատար հանրության» հայեցակարգը:
5. Կողմ է քվեարկել **«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որի նպատակներից մեկը հասարակական կազմակերպությունների հաշվետվությունները հանրությանը հասանելի դարձնելն էր: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթին, որով կարևորվում է կոռուպցիայի, հովանավորչության դեմ պայքարը:
6. Կողմ է քվեարկել **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որով ներդրվում է դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ օրենսդրական գործիքակազմ: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթին, որով կարևորվում է կոռուպցիայի, հովանավորչության դեմ պայքարը, և, ընդհանուր առմամբ, համահունչ է իր ծրագրում առկա խորքային ժողովրդավարական, սոցիալ-ազատական բնույթի բարեփոխումների օրակարգին:
7. Կողմ է քվեարկել **«Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»** օրինագծին, որով ներդրվում է իրավական մեխանիզմ, որը «թույլ է տալիս անօրինական ճանապարհով ստացված գույքի վրա արգելախաչ կիրառել և այն բռնագանձել առանց անձի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթին, որով կարևորվում է կոռուպցիայի, հովանավորչության դեմ պայքարը, և, ընդհանուր առմամբ, համահունչ է իր ծրագրում առկա խորքային ժողովրդավարական, սոցիալ-ազատական բնույթի բարեփոխումների օրակարգին:
8. Կողմ է քվեարկել **«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին»** օրինագծին (Լանզարոտեի կոնվենցիա): Լանզարոտեի կոնվենցիան «կոչված է ապահովելու երեխաների պաշտպանվածությունը սեռական շահագոր-

ծումից և չարաշահումից՝ հաստատելով ընդհանուր չափորոշիչներ և սահմանումներ, որոնք կիրառելի են բոլոր եվրոպական երկրներում»: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթներին, որոնցում շեշտադրված են բռնությունից զերծ հասարակություն ունենալու կարևորությունը, մարդու իրավունքները, մարդու ազատությունն ու արժանապատվությունը հարգելու առաջնայնությունը:

9. Կողմ է քվեարկել **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրինագծին, որը կարևորում է «տեսանելի հարստության և շքեղ գույքային միավորների համարժեք ու պրոգրեսիվ հարկման անհրաժեշտությունը», և որի նպատակներից է «ապահովել պետության՝ վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրականացումը՝ դրանով իսկ ապահովելով տարբեր եկամտային խմբերում գտնվող անձանց հարկման արդար ու տրամաբանական համակարգ»: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթներին, որոնցում որպես լրջագույն խնդիր է համարվում սոցիալական բևեռացումը, և կարևորվում քաղաքացիական համերաշխությունը:
10. Կողմ է քվեարկել **«Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»** օրինագծին, որի նպատակն էր «ապահովել ընտանիքների և քաղաքացիների սոցիալական կարիքի համալիր և միասնական գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը»: Ակնկալվող արդյունքն էր՝ «Բնակչության սոցիալական կարիքների առավել հասցեական և ամբողջական գնահատման, մատչելի, նպատակային և որակյալ սոցիալական համայնքահենք ծառայությունների ամբողջական փաթեթով անխափան տրամադրման ապահովում՝ կիրառելով դրա իրականացման համար առավել ճկուն և արդյունավետ մեխանիզմներ»: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթներին, որոնցում որպես լրջագույն խնդիր է համարվում սոցիալական բևեռացումը, և նպատակ է սահմանվում աղքատության հաղթահարումը:
11. Կողմ է քվեարկել **«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»** օրինագծին, որը կոչված է «ապահովել նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթով և անկախության երաշխիքներով օժտված մասնագիտացված մարմնի առկայությունը»: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԶՊ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթներին, որոնցում կարևորվում է կոռուպցիայի, հովանավորչության դեմ պայքարը, և, ընդհանուր առմամբ, համահունչ է իր ծրագրում առկա խորքային ժողովրդավարական, սոցիալ-ազատական բնույթի բարեփոխումների օրակարգին:

2.2 «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քվեարկությունների վերլուծություն

1. Դեմ է քվեարկել **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրինագծին, որը, ըստ էության, կառավարության կառուցվածքի օպտիմալացման նախագիծ է, այսինքն՝ ենթադրում է պետական ապարատի կրճատում: ԲՀԿ ծրագրում չկա որևէ դրույթ կառավարության կառուցվածքի կամ, ընդհանրապես, պետական կառավարման համակարգի մասին: Սակայն, կարող ենք եզրակացնել, որ այս քվեարկությունը առնվազն չի հակասում ԲՀԿ-ի գաղափարախոսական բնույթի խիստ սահմանափակ թվով դրույթներին: Իսկ դեմ քվեարկությունը խմբակցությունը բացատրել է այսպես՝ «այս կառուցվածքն այս ձևով չի տալիս այն պատասխանները, որոնք հեղափոխությունից հետո մեր երկրում պետք է տնտեսական հեղափոխություն իրականացնեն, և, ընդհանրապես, պետք է ժողովրդի վիճակը, երկրում սոցիալ-տնտեսական վիճակը նորմալացնեն»:

2. Դեմ է քվեարկել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծին, որի նպատակն էր «ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացումը, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործումն ու կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծումը»: Նախագծով ներմուծվում էր համահարթ հարկման համակարգը: «Դեմ» քվեարկությունը համապատասխանում է ԲՀԿ-ի գաղափարախոսական բնույթի այն դրույթին, որը դրական էր գնահատում հարկման պրոգրեսիվ սանդղակը:

3. Կողմ է քվեարկել **«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որը տեղական հանրաքվեի ինստիտուտի կիրառման հնարավորություն է տալիս համայնքներին՝ վերջինների միավորման կամ բաժանման պարագայում: ԲՀԿ-ի ծրագրում չկա այս խնդրին վերաբերող դրույթ: Սակայն, կարող ենք ասել, որ այն առնվազն չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

4. Կողմ է քվեարկել **«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին»** օրինագծին, որի նպատակներն են՝ «ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտ-

ների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը»: Այս նախաձեռնությունը առնվազն չի հակասում ԲՀԿ ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

5. Կողմ է քվեարկել **«Ջասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որի նպատակներից մեկը հասարակական կազմակերպությունների հաշվետվությունները հանրությանը հասանելի դարձնելն էր: Այս նախաձեռնությունը առնվազն չի հակասում ԲՀԿ ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

6. Դեմ է քվեարկել **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որով ներդրվում է դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ օրենսդրական գործիքակազմ: ԲՀԿ ծրագրում չկա այս խնդրին առնչվող որևէ դրույթ: Նախագիծը չի հակասում կուսակցության ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին: Դեմ քվեարկությունը բացատրվել է օրենսդրական փաթեթի այլ մասերի անընդունելի լինելու հանգամանքով, ուստի կարող ենք եզրակացնել, որ ԲՀԿ-ի դիրքորոշումը չի հակասում իր ծրագրի վերոնշյալ դրույթներին:

7. Կողմ է քվեարկել **«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»** օրինագծին, որով ներդրվում է իրավական մեխանիզմ, որը «թույլ է տալիս անօրինական ճանապարհով ստացված գույքի վրա արգելանք կիրառել և այն բռնագանձել առանց անձի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման»: ԲՀԿ ծրագրում չկա այս հարցի վերաբերյալ որևէ դրույթ, սակայն կարող ենք ասել, որ կողմ քվեարկությունը առնվազն չի հակասում ԲՀԿ ծրագրային դրույթներին:

8. Դեմ է քվեարկել **«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին»** օրինագծին: Լանգարոտեի կոնվենցիան «կոչված է ապահովելու երեխաների պաշտպանվածությունը սեռական շահագործումից և չարաշահումից՝ հաստատելով ընդհանուր չափորոշիչներ և սահմանումներ, որոնք կիրառելի են բոլոր եվրոպական երկրներում»: Դեմ քվեարկությունը բացատրվել է մտավախությամբ, որ «կոնվենցիան պարունակում է դրույթներ, որոնք ողջամտորեն սպառնալիքի տակ են դնում երեխաների դաստիարակության շահերը»: Նախագծին դեմ քվեարկելը ցույց է տալիս, որ ԲՀԿ ծրագրում մարդու իրավունքների, ազատությունների վերաբերյալ մոտեցումների բացակայությունը պատահականություն չէ և վկայում է այն մասին, որ սոցիալ-մշակութային հարցերում ԲՀԿ մոտեցումները առնվազն հակաազատական բնույթ ունեն:

9. Կողմ է քվեարկել **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրինագծին, որը կարևորում է «տեսանելի հարստության և շքեղ գույքային միավորների համարժեք ու պրոգրեսիվ հարկման անհրաժեշտությունը», և որի նպատակներից է «ապահովել պետության վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրականացումը՝ դրանով իսկ ապահովելով տարբեր եկամտային խմբերում գտնվող անձանց հարկման արդար ու տրամաբանական համակարգ»։ Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԲՀԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթներին, որով կարևորվում է պրոգրեսիվ հարկման համակարգը, և, ընդհանուր առմամբ, մեծ տեղ է հատկացվում պետության կարգավորող դերին:

10. Դեմ է քվեարկել **««Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»** օրինագծին, որի նպատակն էր «ապահովել ընտանիքների և քաղաքացիների սոցիալական կարիքի համալիր և միասնական գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը»: Ակնկալվող արդյունքն է՝ «Բնակչության սոցիալական կարիքների առավել հասցեական և ամբողջական գնահատման, մատչելի, նպատակային և որակյալ սոցիալական համայնքահենք ծառայությունների ամբողջական փաթեթով անխափան տրամադրման ապահովում՝ կիրառելով դրա իրականացման համար առավել ճկուն և արդյունավետ մեխանիզմներ»: Այս նախաձեռնությունն իր նպատակներով համապատասխանում է ԲՀԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող մի շարք դրույթներին, որոնցով կարևորվում է սոցիալական աջակցությունը բնակչության խոցելի շերտերին: Սակայն ԲՀԿ պատգամավորներից 8-ը դեմ են քվեարկել, մնացածները չեն քվեարկել կամ բացակայել են: ԲՀԿ-ն ուղղակիորեն չի բացատրել իր դիրքորոշումը, սակայն ընդհանուր ելույթներից կարող ենք եզրակացնել, որ ԲՀԿ-ի դիրքորոշումը ընդհանուր քաղաքական բնույթ ունի՝ նրանք այդ ժամանակահատվածում դեմ էին կառավարող ուժի կողմից ներկայացվող ցանկացած օրինագծի:

11. Դեմ է քվեարկել **«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»** օրինագծին, որը կոչված է «ապահովել նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթով և անկախության երաշխիքներով օժտված մասնագիտացված մարմնի առկայությունը»: Այս նախաձեռնության գաղափարը չի հակասում ԲՀԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող ծրագրային դրույթներին, սակայն ԲՀԿ-ն դեմ է քվեարկել: Ելնելով նիստում ԲՀԿ պատգամավորների ելույթների տրամաբանությունից՝ կարող ենք ենթադրել, որ դեմ քվեարկությունը զուտ քաղաքական բնույթի է, որի գաղափարը հետևյալն է՝ կառավարող ուժի կողմից ներկայացված որևէ օրինագիծ անընդունելի է, իսկ միակ ընդունելի օրակարգը վարչապետի հրաժարականն է:

2.3 «Լուսավոր Չայաստան» կուսակցության քվեարկությունների վերլուծություն

1. Դեմ է քվեարկել **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրինագծին: Այն, ըստ էության, կառավարության կառուցվածքի օպտիմալացման մասին է, այսինքն՝ ենթադրում է պետական ապարատի կրճատում: ԼՂԿ-ի ծրագրում նշվում է պետական կառավարման օպտիմալացման, անհարկի վարչարարության վերացման անհրաժեշտության մասին, ինչպես նաև խոսվում է այն մասին, որ հարկ է նվազեցնել պետության մասնակցությունը կրթական հաստատությունների կառավարմանը, իսկ մշակութային ոլորտը ազատականացնել և անկախացնել պետության հովանավորչությունից: Ուստի կարող ենք նշել, որ պետական ապարատի կրճատումը առերևույթ առնվազն չպետք է հակասեր ԼՂԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող ծրագրային դրույթներին: Սակայն ԼՂԿ-ն դեմ է քվեարկել այս նախագծին՝ բացատրելով իր դիրքորոշումը հետևյալ կերպ. «Մեծ կրճատումներ են սպասվում այս կառուցվածքի ընդունման արդյունքում: Սպասեք այդ կրճատումներին: Այդ կրճատումները չեն լինելու արդար կամ ուռճացված հաստիքների կրճատումներ, ինչպես արդեն փորձը ցույց է տվել: Օրինակ՝ փոխմարզպետները մինչև հիմա աշխատում են, բայց շատ հիմնարկներում կրճատումներ են գնում»: Այսինքն՝ ԼՂԿ-ն իր դեմ քվեարկությունը պատճառաբանել է ոչ թե նրանով, որ դեմ է օպտիմալացման գաղափարին, այլ որ առաջարկվող նախագիծը վատ որակի է և անարդար օպտիմալացում է ենթադրում:

2. Դեմ է քվեարկել «Չայաստանի Չանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Չայաստանի Չանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Չայաստանի Չանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՅՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՅՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծին, որի նպատակն էր «ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացումը, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործումն ու կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծումը»: Նախագծով ներմուծվում էր համահարթ հարկման համակարգը: ԼՂԿ-ն իր ծրագրում չի նշել, թե հարկման ընդհանրակարգի կողմնակից է: Ծրագրում միայն ասվում է շքեղության հարկի ներդրման, դեպի խոշոր բիզնես հարկային բեռի վերաբաշխման, հարկատեսակների կրճատման անհրաժեշտության մասին: Առերևույթ, նախագծերի այս փաթեթը չի հակասում ԼՂԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին, սակայն ԼՂԿ-ն դեմ է քվեարկել՝ պատճառաբանելով իր դիրքորոշումը նրանով, որ «Չարկային օրենսգրքը չի լուծում կարևորագույն հարցեր, չի ձևավորում այնպիսի ներդրումային միջավայր, այնպիսի գործարար միջավայր, որի պարագայում ներդրողը միանշանակ որոշում կկայացնի հոգուտ ՅՅ-ում ներդրումների կատարման», և որ «առաջիկա տարիներին տարեկան 3%-ով ավելանալու է ակցիզային հարկը բենզինի, սեղմված բնական գազի և դիզելային վառելիքի համար՝ իր սոցիալական և տնտեսական հետևանքներով»: Այ-

սինքն՝ ԼՅԿ-ն իր դիրքորոշումը բացատրել է նրանով, որ օրենքը, իր կարծիքով, չի ծառայելու դրված նպատակներին:

3. Դեմ է քվեարկել **«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որը տեղական հանրաքվեի ինստիտուտի կիրառման հնարավորություն է տալիս համայնքներին՝ վերջինների միավորման կամ բաժանման պարագայում: ԼՅԿ-ի ծրագրում չկա այս խնդրին վերաբերող դրույթ: Սակայն կարող ենք ասել, որ օրինագիծն առնվազն չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին: Սակայն ԼՅԿ-ն դեմ է քվեարկել՝ պատճառաբանելով, որ «այս կարգավորումներն ավելի շատ խնդիր են առաջացնելու, քան խնդիր են լուծելու՝ զրկելով շատ համայնքներին հանրաքվեներ իրականացնելու հնարավորությունից»: Այսինքն՝ ԼՅԿ-ն դեմ քվեարկությունը բացատրել է օրենքի վատ որակով:

4. Դեմ է քվեարկել **«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին»** օրինագծին, որի նպատակներն են «ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումն որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը»: Այս նախաձեռնությունն առնվազն չի հակասում ԼՅԿ ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին: Սակայն ԼՅԿ-ն դեմ քվեարկությունը բացատրել է նրանով, որ օրենքի որոշ դրույթներ խիստ բացասական են անդրադառնալու տեղական արտադրողների վրա, հարվածելու են փոքր բիզնեսին թեկուզ միայն այն պատճառով, որ փոքր կրպակները, ցուցանակներ տեղադրելու հնարավորություն չունենալով, տնտեսապես տուժելու են: Փաստորեն ԼՅԿ-ն դեմ չէ ծխելու դեմ պայքարին, այլ դեմ է այդ պայքարը չափազանց խիստ մեթոդներով իրականացնելուն, ուստի կարող ենք նշել, որ դեմ քվեարկությունը չի հակասում ԼՅԿ ծրագրի գաղափարախոսական բնույթի դրույթներին:

5. Դեմ է քվեարկել **«Ջասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որի նպատակներից մեկը հասարակական կազմակերպությունների հաշվետվությունները հանրությանը հասանելի դարձնելն էր: Այս նախաձեռնությունը առնվազն չի հակասում ԼՅԿ ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին, սակայն ԼՅԿ-ի դեմ քվեարկելը խմբակցությունը բացատրել է նրանով, որ օրենքը կարող է բեռ դառնալ ՅԿ-ների համար և օգտագործվել ՅԿ-ի ազատության դեմ: Փաստորեն ԼՅԿ-ն սեփական դիրքորոշումը բացատրել է ոչ թե նրանով, որ դեմ է ՅԿ-ների դաշտի կարգավորմանը և նրանց առավել թափանցիկ դարձնելուն, այլ որ օրենքը կարող է խնդիրներ ստեղծել ՅԿ-ների ազատ գործունեության համար, ուստի կարող ենք եզրակացնել, որ ԼՅԿ-ի դեմ քվեարկելը չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթի դրույթներին:

6. Դեմ է քվեարկել **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրինագծին, որով ներդրվում է դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ օրենսդրական գործիքակազմ: ԼՅԿ ծրագրում չկա այս խնդրին առնչվող որևէ դրույթ: Դեմ քվեարկությունը բացատրվել է նրանով, որ օրենսդրական փաթեթը, որի մեջ ներառված է նախագիծը, «ոչ անհրաժեշտ և ոչ էլ համաչափ» է: Մասնավորապես նշվել է, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գործիքներ չունի իր առաքելությունն իրականացնելու համար, և որ օրենքը կարող է գործիք դառնալ դատավորների նկատմամբ ճնշում բանեցնելու, կարող է դրդել լավ դատավորներին համակարգից դուրս գալ և այլն: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ԼՅԿ-ն իր բացասական դիրքորոշումը բացատրել է ոչ թե նրանով, որ դեմ է բարեվարքության գնահատմանն ընդհանրապես, այլ որ դեմ է կոնկրետ այս օրինագծին, որը խնդիրներ է ստեղծելու և չի առողջացնելու դատական համակարգը: Ուստի ԼՅԿ-ի դիրքորոշումը առնվազն չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթի դրույթներին:

7. Ձեռնպահ է քվեարկել **«Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»** օրինագծին, որով ներդրվում է իրավական մեխանիզմ, որը «թույլ է տալիս անօրինական ճանապարհով ստացված գույքի վրա արգելանք կիրառել և այն բռնագանձել առանց անձի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման: ԼՅԿ ծրագրում չկա այս հարցի վերաբերյալ որևէ դրույթ, սակայն ԼՅԿ-ն ձեռնպահ է քվեարկել՝ պատճառաբանելով իր այդ դիրքորոշումը օրենքում խնդրահարույց կետեր լինելու հանգամանքով, այլ ոչ թե նրանով, որ դեմ է օրենքի հիմքում ընկած գաղափարներին: Ուստի ԼՅԿ-ի դեմ քվեարկությունը չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

8. Չի քվեարկել **«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին»** օրինագծին: Լանգարոտեի կոնվենցիան «կոչված է ապահովելու երեխաների պաշտպանվածությունը սեռական շահագործումից և չարաշահումից՝ հաստատելով ընդհանուր չափորոշիչներ և սահմանումներ, որոնք կիրառելի են բոլոր եվրոպական երկրներում»: Նախագծի քվեարկությանը չմասնակցելը ԼՅԿ-ն չի պատճառաբանել: ԼՅԿ-ի նման դիրքորոշումը համահունչ է իր ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

9. Դեմ է քվեարկել **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրինագծին, որը կարևորում է «տեսանելի հարստության և շքեղ գույքային միավորների համարժեք ու պրոգրեսիվ հարկման անհրաժեշտությունը», և որի նպատակներից է «ապահովել պետության վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրականացումը՝ դրանով իսկ ապահովելով տարբեր եկամտային խմբերում գտնվող անձանց հարկման արդար ու տրամաբանական համակարգ»: Այս նախաձեռնությունը համապատասխանում է ԼՅԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող այն դրույթներին, որով կարևորվում է շքեղության հարկը, և, ընդհանուր առմամբ, մեծ տեղ է հատկացվում պետության կարգավորող դերին: Սակայն ԼՅԿ-ն, այնուամենայնիվ, դեմ է քվեարկել՝ պատճառաբանելով,

որ «այսօր պարտավոր եք մինչև 10 մլն չհարկել, ինչպես նաև եկամուտներից ենթադրելով, թե ինչպիսին է եկամուտը, գործակիցներ դնել՝ ուսումնասիրելով համայնքում ունեցած տեղեկատվությունը: Հետևաբար, այո՛, մի հատվածն ընդունվել է, բայց ոչ մնացածը, որոնք անընդունելի են դարձնում ռեֆորմն ինքնին»: Այսինքն՝ ԼՀԿ-ն դեմ է քվեարկել, քանի որ համարել է, որ օրենքը անարդարացիորեն բուլորին է հարկում, և որ ցածր եկամուտ ունեցողները ի հետևանք տուժելու են: Հաշվի առնելով կուսակցության վերոնշյալ պատճառաբանությունը՝ կարող ենք նշել, որ, ըստ էության, ԼՀԿ-ի դիրքորոշումը չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին:

10. Կողմ է քվեարկել **«Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»** օրինագծին, որի նպատակն էր «ապահովել ընտանիքների և քաղաքացիների սոցիալական կարիքի համալիր և միասնական գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը»: Ակնկալվող արդյունքն էր՝ «Բնակչության սոցիալական կարիքների առավել հասցեական և ամբողջական գնահատման, մատչելի, նպատակային և որակյալ սոցիալական համայնքահենք ծառայությունների ամբողջական փաթեթով անխափան տրամադրման ապահովում՝ կիրառելով դրա իրականացման համար առավել ճկուն և արդյունավետ մեխանիզմներ»: Այս նախաձեռնությունը, իր նպատակներով համապատասխանում է ԼՀԿ-ի գաղափարախոսական բնույթ ունեցող մի շարք դրույթներին, որոնցում կարևորվում է սոցիալական աջակցությունը բնակչության խոցելի շերտերին, ուստի դեմ քվեարկությունը համապատասխանում է իր ծրագրում տեղ գտած գաղափարախոսական բնույթի դրույթներին:

11. Դեմ է քվեարկել **«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»** օրինագծին, որը կոչված է «ապահովել նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառնությունը և անկախության երաշխիքներով օժտված մասնագիտացված մարմնի առկայությունը»: Այս նախաձեռնությունը չի հակասում ԼՀԿ-ի ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին, սակայն դեմ քվեարկելու իր դիրքորոշումը ԼՀԿ-ն բացատրել է նրանով, որ, իր կարծիքով, օրենքը անկատար է և խնդրահարույց, և որ կան կետեր, որոնք չեն ծառայում նպատակին: Ուստի կարող ենք եզրակացնել, որ ԼՀԿ-ի դիրքորոշումը չի հակասում իր ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին, քանի որ կուսակցությունը դեմ չէ հակակոռուպցիոն կոմիտե ստեղծելու գաղափարին:

3

Արտախորհրդարանական ուժերի հայտարարությունների վերլուծություն

3.1 «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ՔՈՍԴԿ) հայտարարությունների վերլուծություն

ՔՈՍԴԿ-ն հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից առանձնացրել ենք առե-րևույթ գաղափարախոսական տարրեր ունեցող հայտարարությունները և վերլուծել դրանք: Հայտարարությունները վերլուծելիս չենք վերլուծել այն հարցը, թե արդյոք անկեղծ է կուսակ-ցությունը իր դիրքորոշումները հայտնելիս, և արդյոք հիմնավոր են դրանցում առկա թեզերը:

Հայտարարությունները վերաբերում են՝

- **Սահմանադրական դատարանի հարցին².** *հայտարարության մեջ ՔՈՍԴԿ-ն՝ նշելով, որ ՍԴ անդամները պետք է հեռանան, քանի որ նպաստել են պետության հիմնարար սկզբունքնե-րի ոտնահարմանը, միաժամանակ քննադատում էր կառավարող ուժին «անհետևողական, երկակի չափանիշներով, փոփոխվող սկզբունքներով, պահի հարմարությամբ առաջնորդ-վելու» գործելաճի համար: Կուսակցությունը նաև դատապարտում էր վարչապետի այն միտքը, «թե հանրաքվեի հարցում կառավարող ուժին սատարող բոլոր ուժերը նվիրյալներ են, իսկ դեմ հանդես եկողները՝ դավաճաններ»:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գա-ղափարախոսական դրույթներ՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության վրա շեշտադրում, ֆորմալ օրինականության քննադատություն, մասնակցային գործըն-թացի, ուղիղ ժողովրդավարության կարևորում:

- **ՍԴ-ի վերաբերյալ նախատեսվող հանրաքվեի խնդրին³.** *կուսակցությունը նամակով դի-մել և հարցեր է ուղղել ԶՊ վարչությանը ՍԴ-ի վերաբերյալ նախատեսվող հանրաքվեի առն-չությամբ և նշել, որ այդ հարցերի պատասխաններից է կախված, թե ինչպիսին կլինի իրենց դիրքորոշումը: Նամակի մեջ կար քննադատություն, որ անցյալին չի տրվել իրավաբանաբա-կան գնահատական:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գա-ղափարախոսական դրույթներ՝ հանրաքվեի կարևորում, թափանցիկ կառավարում, որո-շումների կայացման գործընթացում հնարավորինս հանրային լայն մասնակցություն:

2. <https://www.facebook.com/qosdp/posts/644327859670957>
3. <https://www.facebook.com/qosdp/posts/650477975722612>

- **Ամուլսարում տեղի ունեցող իրադարձություններին⁴.** կուսակցությունը քննադատում էր այն, որ «Լիդիանի» կողմից «հեռացվել են հանրային տարածքում քաղաքացիների տեղադրած վազոն-տնակները, և դրանց տեղում տեղադրվել են ընկերության տնակները»: ԶՈ-ն նշում էր, որ «Մասնավոր ռազմականացված կազմակերպությունը դարձել է Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների դեմ ճնշման գործիք»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ հանրային տարածք հասկացության կարևորում, բնապահպանական հարցերի առաջնայնություն, վերազգային կապիտալի նկատմամբ պետության հատուկ վերահսկողություն, մարդու իրավունքների առաջնայնություն:

- **Ներքաղաքական լարված իրավիճակին⁵.** հայտարարությունում կուսակցությունը կոչ էր անում «ներքաղաքական դաշտում ձևավորված երկու հակադիր կողմերին» «իրենց ամենասկզբունքային դիրքերից մեկ քայլ նահանջել և հանրությանը չտանել նման զարգացումների բերումով անխուսափելի արյունալի բախման»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ անկախություն, արդարություն, համերաշխություն:

- **Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծին⁶.** հայտարարության մեջ մասնավորապես նշվում է, որ Հարկային օրենսգրքում փոփոխությունների հիմնավորման հիմքում ընկած այն գաղափարը, որ վերացվելու է աշխատավարձերի թերհայտարարագրման մոտիվացիան, հիմնավոր չէ: Նշվում է նաև, որ կուսակցության համար անհասկանալի է «Էժան» աշխատուժ ստեղծելով ազգային տնտեսության մրցունակությունն ու ներդրումային գրավչությունը բարձրացնելու թեզը: Նշվում էր նաև, որ առաջարկվող փոփոխություններով խախտվում են ուղղահայաց և հորիզոնական արդարության սկզբունքները:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ Էժան աշխատուժ հայեցակարգի քննադատություն, նվազ եկամուտներ ունեցող բնակչության վրա հարկային բեռ դնելու հայեցակարգի անընդունելիություն:

- **Գագիկ Ծառուկյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու անհրաժեշտությունը⁷.** կուսակցությունը՝ ի դեմս գործադիր մարմնի քարտուղար Սուրեն Սահակյանի, դիմում է ներկայացրել ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին և ՀՀ գլխավոր

4. <https://www.facebook.com/qosdp/posts/768733797230362>

5. <https://www.facebook.com/qosdp/posts/847367982700276>

6. «Քաղաքացու որոշում» ՄԴ կուսակցությունը դեմ է Հարկային օրենսգրքի նման փոփոխություններին, 02.11.19, <https://iravaban.net/214869.html>

7. «Քաղաքացու որոշում» կուսակցությունը դիմել է դատախազություն և ԱԺ նախագահին՝ դադարեցնելու Գագիկ Ծառուկյանի պատգամավորի լիազորությունները, 02.11.19, <https://iravaban.net/224535.html>

դատախազ Արթուր Դավթյանին՝ սույն թվականի ապրիլի 19-ին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ ԱԺ նիստերի դահլիճում և դրանից դուրս լրագրողների հետ շփումներում հնչեցրած հայտարարությունների հետ կապված քրեական հետապնդում հարուցելու և պատգամավորական մանդատից զրկելու գործընթաց սկսելու հարցով՝ հաշվի առնելով պատգամավորի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ բիզնեսի և քաղաքականության խիստ տարանջատման հայեցակարգի կարևորում:

ԶՌ-ի հայտարարությունների մի մասը պարունակում է գաղափարախոսական բնույթի դրույթներ: Հայտարարություններից շատերը քննադատական բովանդակություն ունեն, որոշ դեպքերում առկա են նաև սեփական մոտեցումներ և քաղաքականության առաջարկներ:

Վերլուծության ենթարկած հայտարարություններում առկա են ինչպես սոցիալ-մշակութային, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, որոնք համահունչ են կուսակցության ծրագրում առկա գաղափարախոսական բնույթի դրույթներին: ԶՌ-ի ծրագրում կարևորվող խնդիրներից, բացասական դրույթներից էին նշվել, մասնավորապես՝ օլիգարխիան, անհավասար մրցակցային պայմանները, մետաղական հանքեր, եկամտի և հնարավորությունների անհավասարություն, կլանային, արտոնյալ փոքր խմբեր: Որպես դրական երևույթներ, դրական արժեքներ էին նշվել, մասնավորապես՝ արդյունքի արդար բաշխումը, մասնակցայնությունը, սոցիալական արդարությունը, հավասար մրցակցային պայմանները, պետական հոգածությունը, կանաչ տեխնոլոգիաները, արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Որպես առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ էին նշվել, մասնավորապես՝ պետության կողմից բիզնեսի կարգավորում հոգուտ հանրության շահի, ցածր եկամուտ ստացողների ցածր տոկոսադրույթով հարկում, մետաղական արդյունաբերության հետմղում, ուղիղ ժողովրդավարության մեխանիզմների պարզեցում և ընդունում, շուկայի ապամենաշնորհում:

Հայտարարություններում առկա այլ դրույթները առնվազն չեն հակասում ծրագրում առկա դրույթներին: Ուստի կարող ենք նշել, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերին վերաբերող մեր ուսումնասիրությունում ԶՌ-ի ծրագրին տրված գաղափարախոսական կողմնորոշման գնահատականը՝ ձախ-կենտրոնամետ, չափավոր ազատական, համահունչ է հայտարարություններում առկա գաղափարներին:

3.2 Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀԅԴ) կուսակցության հայտարարությունների վերլուծություն

ՀԅԴ-ն հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից առանձնացրել ենք առերևույթ գաղափարախոսական տարրեր ունեցող հայտարարությունները և վերլուծել դրանք: Հայտարարությունները վերլուծելիս չենք անդրադարձել այն հարցին, թե արդյոք անկէղծ է կուսակցությունն իր դիրքորոշումները հայտնելիս, և արդյոք հիմնավոր են դրանցում առկա թեզերը:

Հայտարարությունները վերաբերում են՝

- **Դատարանների մուտքերը և ելքերը արգելափակելու Նիկոլ Փաշինյանի կոչին**⁸. կուսակցությունը նշում էր, որ ՀՀ վարչապետի կոչը դիտարկում են «որպես Հայաստանում սահմանադրական կարգի դեմ կատարված քայլ, որպես դատական իշխանության խոչընդոտում և, առհասարակ, պետականությունն արկածախնդրության տանելու չկշռադատված քայլ»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ քաղաքական բռնաճնշումների, ուժի կիրառման, ընտրողական մոտեցման դատապարտում, բացասական վերաբերմունք անհանդուրժողականության նկատմամբ:

- **Ռոբերտ Զոչարյանի խափանման միջոցի հարցին**⁹. կուսակցությունը մասնավորապես նշում էր. «Հավատալով, որ դատարանը հավատարիմ կմնա անկախ և ճշումներից զերծ որոշում կայացնելու իր սահմանադրական հանձնառությանը, այդուհանդերձ, դատապարտում ենք արդարադատությունը խոչընդոտելու յուրաքանչյուր դեպք՝ դրանք դիտելով որպես Հայաստանում սահմանադրական կարգի հաստատման ու ամրագրման դեմ ուղղված քայլ»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ անհանդուրժողականության դատապարտում, ժողովրդավարական հասարակության կարևորություն, ազգային միասնականության, ներհասարակական համերաշխության, համազգային անվտանգության վրա շեշտադրում:

- **Իշխանությունների քաղաքականության սոցիալական բաղադրիչի վերաբերյալ հարցին**¹⁰. կուսակցության երիտասարդական միությունը պնդում էր, որ «բարեփոխումների բողի տակ ոտնահարվում են խոցելի և միջին խավերի իրավունքները»: Հայտարարությունում նշվում էր նաև, որ անհրաժեշտ է խուսափել «աշխատավոր դասի և սոցիալական խոցելի խմբերի շահերի ոտնահարումից», և որ քաղաքականությունը պետք է այն-

8. ՀԅԴ Հայաստանի ԳՄ հայտարարությունը, 19.05.19, <https://www.arfd.am/news/13460/>

9. ՀԅԴ Հայաստանի ԳՄ հայտարարությունը, 18.05.19, <https://www.arfd.am/news/13406/>

10. Բարեփոխումների բողի տակ ոտնահարվում են խոցելի և միջին խավերի իրավունքները, 14.03.19, <https://www.arfd.am/news/10446/>

պես պլանավորել, որ միտված լինի «առաջին հերթին միջին և միջինից ցածր եկամուտ ունեցող խավի ներկայացուցիչների կենցաղային պայմանների բարելավմանը»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ միջին և միջինից ցածր եկամուտ ունեցող խավի ներկայացուցիչների կենցաղային պայմանների բարելավման անհրաժեշտություն, փոքր և միջին ձեռնարկատիրության շահերի պաշտպանություն, ընկերվարական արժեքներ:

- **ՀՀ Կառավարության 2019-2023 թթ. ծրագրի վերաբերյալ հարցին**¹¹. Կուսակցությունը քննադատության էր ենթարկում կառավարության ծրագիրը՝ մասնավորապես նշելով, որ «ի հակադրություն իշխող ուժի բազմիցս հնչեցրած մոտեցումների»՝ ծրագրում անդրադարձ չկա քաղաքական համակարգի բարեփոխմանը: Նշվում էր նաև, որ «փորձ է արվում կառավարությունը փոխարինել մեկ անձով՝ գերկենտրոնացնելով կոլեգիալ կառավարման մարմնի լիազորությունները»: ՀՀԴ-ի կարծիքով՝ դա «երկրի ժողովրդավարական զարգացման ընթացքը խաթարող և մեծ ռիսկեր պարունակող իրողություն է»: Հայտարարությունը, որը բաղկացած էր մի քանի մասից, պարունակում էր նաև ոլորտային գնահատականներ:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ «Չարգանալ՝ չզիջելով*» սկզբունք (*չզիջելը Արցախի տարածքին է վերաբերում), հայ ժողովրդի կենսական շահ, ազգային արժեհամակարգի ձևավորում, ազգային պետության կայացում, ազգ-բանակ, նեոլիբերալիզմի սկզբունքների համատեքստում իրականացվող տնտեսական քաղաքականության անընդունելիություն, փոքր կառավարության քննադատություն, ակտիվ տնտեսական քաղաքականության կարևորում, սոցիալական արդարություն, տնտեսական աճի արդյունքների արդարացի բաշխման կարևորություն, ազատ շուկայական կարգավորման հենքի քննադատություն, հարուստների և աղքատների եկամուտների միջև մեծ տարբերության անընդունելիություն, ազգային արժեհամակարգի, հոգևոր և ազգային ավանդույթների, ազգային դաստիարակության, հայրենասիրության, հանրային համախոհության կարևորություն:

- **ԲՀԿ-ի շուրջ իրադարձությունների վերաբերյալ հարցին («Հայրենիք» և «Մեկ Հայաստան» կուսակցությունների հետ համատեղ)**¹². հայտարարությունում նշվում էր, որ կուսակցությունների համոզմամբ՝ ԲՀԿ նախագահի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ ազգային-պետական իրական օրակարգի կարևորություն, համազգային համախոհության ընդգծում, ազգային պառակտման երևույթի քննադատություն:

11. ՀՀԴ Հայաստանի ԳՄ տեսակետը ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրի վերաբերյալ, 18.02.19, <https://www.arfd.am/news/9507/>
12. Ընդդիմադիր քաղաքական ուժերի հայտարարությունը, 16.06.20, <https://www.arfd.am/news/27302/>

- **Կորոնավիրուսի հետևանքների մեղմման քաղաքականության վերաբերյալ հարցին.** Ի թիվս իշխանությունների հասցեին ուղղված տարբեր բնույթի մեղադրանքների և քննադատության, կուսակցությունը քննադատում էր «բիզնեսին աջակցելու փոխարեն բանկերին ֆինանսավորելը»: Նշվում էր, որ «փաստորեն, կառավարությունը խուսափեց վերցնել տնտեսական ծրագրի իրականացման պատասխանատվությունը (ռիսկերը), որի պատճառով բիզնեսի աջակցության ծրագրերը հիմնականում սահմանափակվեցին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ պետք է աջակցել բիզնեսին, այլ ոչ թե ֆինանսավորել բանկերը, տնտեսական ծրագրի իրականացման պատասխանատվությունը պետք է իր վրա վերցնի կառավարությունը, առանց բյուջետային ծախսերի վերանայման պետական պարտքի ավելացում:

- **Լանգարոտեի կոնվենցիայի վավերացման վերաբերյալ խնդրին**¹³. կուսակցությունը խստորեն դատապարտում էր Լանգարոտեի կոնվենցիայի վավերացման իրողությունը: Հայտարարությունում կոնվենցիան դիտարկվում էր որպես «վտանգավոր և խիստ վիճահարույց ենթատեքստ պարունակող»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ 6 տարեկանից բարձր երեխաների սեռական կրթությունը «կարող է ծանր բարոյահոգեբանական և արժեհամակարգային կորստաբեր հետևանքներ ունենալ»: Կարևորվում են ազգային արժեհամակարգ, ընտանեկան ավանդույթներ, երկրի բարոյահոգեբանական և արժեքային դաշտ հասկացությունները:

- **Հայ Առաքելական Եկեղեցու (ՀԱԵ) դեմ ենթադրյալ արշավի թեմային**¹⁴. հայտարարությունում կուսակցությունը իշխանություններից պահանջում էր «հստակ դիրքորոշում հայտնել» եկեղեցու դեմ ենթադրյալ արշավի կապակցությամբ և «համապատասխան վերաբերմունք դրսևորել նմանօրինակ կեցվածք ցուցաբերած քաղաքական, պետական, հանրային գործիչների հանդեպ»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ ազգային արժեքների և ՀԱԵ-ն ոտնձգություններից պաշտպանելու կարևորություն, հասարակության պառակտման երևույթի անընդունելիություն:

- **Արտակարգ դրությամբ պայմանավորված օրենքներում փոփոխություններ անելու վերաբերյալ հարցին**¹⁵. կուսակցությունը քննադատում էր օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես նշելով, որ «օրենսդրական փոփոխությունները ենթադրում

13. ՀՀԴ Հայաստանի ԳՄ ՄՈՂ գրասենյակի հայտարարությունը, 02.06.20, <https://www.arfd.am/news/26932/>

14. ՀՀԴ Հայաստանի ԳՄ հայտարարությունը, 15.04.20, <https://www.arfd.am/news/25457/>

15. ՀՀԴ Հայաստանի Գերագույն մարմնի հայտարարությունը, 01.04.2020, <https://www.arfd.am/news/25146/>

են այնպիսի տոտալ վերահսկողության սահմանում, որը խաթարում է անձնական, մասնավոր և ընտանեկան կյանքի սահմանադրական անձեռնմխելիությունը»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ հասարակական համերաշխության, քաղաքական հանդուրժողականության, պառլամենտարիզմի կարևորություն:

- **Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի պանթեոնը պղծելու փաստի հարցին**¹⁶. Կուսակցությունն ակնարկում էր, որ տեղի ունեցածը հետևանք է մի շարք բացասական երևույթների, որի գեներացնողը իշխանություններն են:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ ազգային եկեղեցու, դպրոցի, ընտանիքի կարևորություն, և այն գաղափարը, որ դրանք վտանգված են իշխանությունների գործունեության հետևանքով և կարիք ունեն պաշտպանության, անհանդուրժողականության մերժում:

- **Եկամտային հարկի դրույթաչափերի նախատեսվող համահարթեցման խնդրին**¹⁷. հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր, որ «նախատեսվող փոփոխությունը հակասում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ սոցիալական շուկայական տնտեսական կարգ ունենալու պահանջին, մտահոգիչ է սոցիալական արդարության տեսանկյունից, ամբողջապես հակասում է սոցիալական պետության գաղափարախոսությանը, չի բխում միջազգային լավագույն փորձից»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ համերաշխ զարգացում, սոցիալական ներառական զարգացում, հարկային համակարգի սոցիալական բաղադրիչ, եկամտային հարկի պրոգրեսիվ դրույթաչափ, պետական գործուն աջակցություն արհմիությունների դերի բարձրացմանը:

ՀՀ-ի հայտարարությունների բացարձակ մեծամասնությունը պարունակում է գաղափարախոսական բնույթի դրույթներ, սակայն հիմնականում բաղկացած է իշխանությունների հասցեին ուղղված խիստ քննադատությունից, որոշ դեպքերում առկա են նաև սեփական մոտեցումներ և քաղաքականության առաջարկներ:

Վերլուծության ենթարկված հայտարարություններում առկա են ինչպես սոցիալ-մշակութային, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, որոնք համահունչ են կուսակցության ծրագրում առկա գաղափարախոսական բնույթի դրույթներին: ՀՀ-ի ծրագրում կարևորվող խնդիրներից, բացասական դրույթներից էին, մասնավորապես՝ հասարակության բևեռացու-

16. ՀՀ-ի Հայաստանի Գերագույն մարմնի հայտարարությունը, 02.12.19, <https://www.arfd.am/news/20651/>

17. Եկամտային հարկի դրույթաչափերի նախատեսվող համահարթեցումը. խնդիրներ և այլընտրանքային լուծումներ, 31.05.19, <https://www.arfd.am/news/14184/>

մը, սոցիալական բևեռացումը, նեոլիբերալ քաղաքականությունը: Որպես դրական երևույթներ, դրական արժեքներ էին նշվել, մասնավորապես՝ ազգայինը, սոցիալիստականը, ազգային արժեքները, սոցիալական արդարությունը, համերաշխ հասարակությունը, ազգ-բանակ հայեցակարգը, համայն հայության ազգային նպատակները: Որպես առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ էին նշվել, մասնավորապես՝ պետական արդյունավետ միջամտումը, եկամուտների արդար բաշխումը:

Հայտարարություններում առկա այլ դրույթները առնվազն չեն հակասում ծրագրում առկա դրույթներին: Ուստի, կարող ենք նշել, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերին վերաբերող մեր ուսումնասիրությունում ՀՀԴ-ի ծրագրին տրված գաղափարախոսական կողմնորոշման գնահատականը՝ ազգային-պահպանողականություն և ձախ-կենտրոնամետություն, համահունչ է հայտարարություններում առկա գաղափարներին:

3.3 Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) կուսակցության հայտարարությունների վերլուծություն

ՀԱԿ-ը հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից առանձնացրել ենք առերևույթ գաղափարախոսական տարրեր ունեցող հայտարարությունները և վերլուծել դրանք: Հայտարարությունները վերլուծելիս չենք անդրադարձել այն հարցին, թե արդյոք անկեղծ է կուսակցությունը իր դիրքորոշումները հայտնելիս, և արդյոք հիմնավոր են դրանցում առկա թեզերը:

Հայտարարությունները վերաբերում են՝

- **Նոր Ընտրական օրենսգրքի ընդունման անհրաժեշտությանը**¹⁸. հայտարարությունում մասնավորապես նշված է. «Օրինագիծը լուծում է ընտրությունները գաղափարական, քաղաքական հիմքով անցկացնելու խնդիրը», քանի որ «ռեյտինգային» փոխաբերեն 100-տոկոսանոց համամասնական ընտրակարգ է սահմանվում: ՀԱԿ-ը նշել է, որ այդպիսի օրենսգրքով արտահերթ ընտրությունները քաղաքական ճգնաժամը հաղթահարելու հնարավորություն են տալիս:

Այս հայտարարությունը գաղափարախոսական տարրերի պարունակման տեսանկյունից հետաքրքրական է միայն նրանով, որ բացահայտում է, որ կուսակցությունը մրցակցային ժողովրդավարական մոդելի կողմնակից է:

- **ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրին**¹⁹. հայտարարությունում, մասնավորապես, դրական վերաբերմունք էր արտահայտվում ծրագրի մի շարք կետերի վերաբերյալ: Մասնավորապես նշվում էր, օրինակ՝ որ ծրագիրը «պարունակում է արժեքավոր դիտարկումներ արդյունավետ կառավարման այնպիսի սկզբունքների մասին, ինչպիսիք են՝ ներառականությունը, հաշվետվողականությունը, թափանցիկությունը, կարգավորումների պարզեցումը և այլն»: ՀԱԿ-ը նաև նշում էր, թե ինչպիսի լուծումներ է առաջնային համարում: Այդ լուծումների թվում էին՝ Հայաստանի հասարակական-քաղաքական համակարգի վերափոխումը, մրցակցային, ազատական տնտեսության հիմքերի վերականգնումը և այլն:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ արդար մրցակցային և մասնակցային տնտեսություն, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների տնտեսության արժևորում, անցումային արդարադատության կարևորություն, իշխանության և խոշոր բիզնեսի հստակ տարանջատում, ոչ բնական մենաշնորհների վերացում, սոցիալական ծայրահեղ բևեռացման անընդունելիություն, այլընտրանքային էներգետիկայի կարևորում:

18. <https://www.facebook.com/qosdp/posts/644327859670957>

19. Հայտարարություն ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրի վերաբերյալ, 16.02.19, <http://www.anc.am/?p=2980>

- **Ամուլսարի վերաբերյալ խնդրին**²⁰. հայտարարությունում մասնավորապես նշվում էր, որ պետք է արգելել «հանքավայրերի այնպիսի շահագործումը, որը ոչնչացնում է շրջակա էկոհամակարգը, անհամաչափ վնաս պատճառում բնությանը, ծանր հարված հասցնում մարդկանց առողջությանը, հափշտակում ժողովրդին պատկանող ընդերքի հարստությունը», և որ «հանրության մոտ մի շարք հարցեր են հարուցել, որոնք կասկածի տակ են դնում Ամուլսարի հանքի շահագործման նպատակահարմարությունը»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ էկոհամակարգի կարևորություն, ընդերքի «գիշատիչ շահագործման» անընդունելիություն, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության կարևորություն:

- **Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման պետական քաղաքականությանը**²¹. հայտարարությունում առաջարկվում էր պետական աջակցություն ցուցաբերել տեխնոլոգիաների առաջավոր սահմանին աշխատող ընկերություններին: Առաջարկների թվում նշվում էր՝ անհրաժեշտ է ստեղծել «պետություն-մասնավոր գործընկերություն (PPP)՝ օրենքի հիման վրա գործող պետական բաժնեմասով տեղեկատվական և այլ բարձր տեխնոլոգիաների զարգացմամբ զբաղվող ձեռնարկություններ»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ գիտելիքահենք և տեխնոլոգիահենք արդյունաբերության աճի կարևորում, պետություն-մասնավոր ձեռնարկություն սերտ համագործակցություն, արտաքին տնտեսական քաղաքականության ազատականացում, բիզնեսային խմբերի շահերը պաշտպանող ասոցիացիաների ստեղծման կարևորություն:

- **Ակտիվիստ Վարդան Չարությունյանի վրա հարձակման առիթով**²². հայտարարությունում մասնավորապես նշվում էր, որ «ՀՀ-ի ղեկավարները բաց տեքստով հայտարարում են, որ որպես քաղաքական պայքարի մեթոդ կրկին որդեգրում են ահաբեկչությունը, և ինքնադատաստան են հայտարարում այն անձանց նկատմամբ, որոնք ունեն իրենց հայացքներից տարբերվող հայացքներ կամ իրենց դավանած արժեքներին չհամապատասխանող արժեքներ»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ ինքնադատաստանի, ահաբեկչության խիստ մերժում և, ընդհանուր առմամբ, քաղաքականությունում բռնության բացառում:

- **Սահմանադրական փոփոխությունների գործընթացի վերաբերյալ**²³. հայտարարությունում մասնավորապես նշվում էր, որ անհրաժեշտ է անցնել կիսանախագահական

20. Հայտարարություն, 29.08.19, <https://anc.am/2985/>

21. Հայտարարություն, 08.11.19, <http://www.anc.am/?p=3000>

22. Վարդան Չարությունյանի հետ կատարվածն այլ կերպ, քան ահաբեկչական ակտ դժվար է բնութագրել. ՀԱԿ, 05.06.19, <https://lurer.com/?p=324466&l=en>

23. Հայտարարություն, 11.02.20, <http://www.anc.am/?p=3011>

մողելին և չսահմանափակվել «գործող սահմանադրական կառավարման մողելի ակնհայտ թերությունների շտկմամբ», այլապես «հետին թվով կլեգիտիմացվի 2015 թվականի հանրաքվեում Հայաստանի ժողովրդի կամքի ապօրինի մերժումը»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ «քաղաքական համակարգի օլիգարխիզացիայի» անընդունելիություն, «ժողովրդի կամք» հասկացության կարևորություն, որոշումների կայացմանը նախորդող հանրային լայն խորհրդակցությունների կարևորում:

- ***Անշարժ գույքի հարկի մասով Հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններին***²⁴. *հայտարարությունում մասնավորապես նշվում էր. «Պետություն-հարկատու կամ պետություն-հասարակություն հարաբերություններում անհրաժեշտ է խստորեն պահպանել հավասար հնարավորությունների սկզբունքը: Նման փոփոխություններին անհրաժեշտաբար պետք է նախորդեին լայն հասարակական քննարկումները»: ՀԱԿ-ն առաջարկում էր ՀՀ կառավարությանը՝ վերանայել իր մոտեցումներն այս հարցում, նախաձեռնել օրենսդրական փոփոխությունների չեղարկումը և կոնցեպտուալ հիմքի վրա խնդրին անդրադառնալ արտակարգ դրության ռեժիմն ավարտվելուց հետո:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ պետություն-հասարակություն հարաբերություններում հավասար հնարավորությունների սկզբունքի պահպանման կարևորություն, հարկային ռեժիմի անփոփոխելիության եռամյա պարբերաշրջանի կանոնի պահպանման կարևորություն, ժառանգության և հարստության հարկի ներդրման կարևորություն:

ՀԱԿ-ի հայտարարությունների զգալի մասը պարունակում է գաղափարախոսական բնույթի դրույթներ: Հայտարարություններից շատերը քննադատական բովանդակություն ունեն, որոշ դեպքերում առկա են նաև սեփական մոտեցումներ և քաղաքականության առաջարկներ:

Վերլուծության ենթարկած հայտարարություններում առկա են ինչպես սոցիալ-մշակութային, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, որոնք համահունչ են կուսակցության ծրագրում առկա գաղափարախոսական բնույթի դրույթներին: ՀԱԿ-ի ծրագրում կարևորվող խնդիրներից, բացասական դրույթներից էին նշվել, մասնավորապես՝ բռնապետությունը, հասարակության սուր շերտավորումը, տնտեսության մենաշնորհացումը: Որպես դրական երևույթներ, դրական արժեքներ էին նշվել, մասնավորապես՝ ազատությունը, մարդու իրավունքների առաջնայնությունը, սոցիալական արդարությունը, պրոգրեսիվ հարկային քաղաքականությունը, հնարավորությունների հավասարությունը: Որպես առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ էին նշվել, մասնավորապես՝ պետության նշանակալից միջամտությունը, արտադրության խթանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, փոքր և միջին բիզնեսի արագ զարգացումը:

24. Հայտարարություն, 29.06.20, <http://www.anc.am/?p=3024>

Հայտարարություններում առկա այլ դրույթները առնվազն չեն հակասում ծրագրում առկա դրույթներին: Ուստի կարող ենք նշել, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերին վերաբերող մեր ուսումնասիրությունում ՀԱԿ-ի ծրագրին տրված գաղափարախոսական կողմնորոշման գնահատականը՝ աջ կենտրոնամետ չափավոր ազատականություն, որը որոշ առումներով մոտենում է ձախ կենտրոնամետ չափավոր պահպանողականությանը, համահունչ է հայտարարություններում առկա գաղափարներին: Հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, հայտարարություններում գերիշխել են ձախ-կենտրոնամետությանը և չափավոր ազատականությանը հարիր դրույթներ:

3.4 «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունների վերլուծություն

«Ժառանգություն» կուսակցությունը հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից առանձնացրել ենք առերևույթ գաղափարախոսական տարրեր ունեցող հայտարարությունները և վերլուծել դրանք: Հայտարարությունները վերլուծելիս չենք անդրադարձել այն հարցին, թե արդյոք անկեղծ է կուսակցությունն իր դիրքորոշումները հայտնելիս, և արդյոք հիմնավոր են դրանցում առկա թեզերը:

Հայտարարությունները վերաբերում են՝

- **Վարկատու կազմակերպությունների հետ կապված խնդիր**²⁵. *կուսակցությունը մասնավորապես նշում էր, որ «Պետության խնդիրը ոչ թե քաղաքացու ունեզրկմանը լռելյայն աջակցելն է, այլ համավարակով պայմանավորված արտակարգ դրության մեջ սատար կանգնելը»:* Առաջարկվում էր, որ պետությունը մարի մինչև 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ սպառողական վարկերը: *Կուսակցությունը նաև առաջարկում էր լիցենզիայից զրկել որոշ վարկատու կազմակերպությունների, որոնք «ստեղծվել են փողերի լվացման կասկած հարուցող ճանապարհով»:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ հասարակության լայն շերտերին ուղղված պետության ուղիղ աջակցության խրախուսում, խիստ, կտրուկ քաղաքականություն այն մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ, որոնց նկատմամբ կա կասկած, որ նրանք ձևավորվել են փողերի լվացման ճանապարհով:

- **ԲՀԿ անդամներին վերաբերող քրեական գործերի խնդիր**²⁶. *հայտարարությունում կուսակցությունը մեղադրում էր իշխանություններին ԲՀԿ-ի հասցեին «ընտրողական մեղադրանքներ» հնչեցնելու համար և զգուշացնում, որ նման գործելաոճը կարող է հանգեցնել «անձնական և քաղաքական բռնաճնշումների, քաղաքացիական բախումների, վախի և անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը»:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ քաղաքական բռնաճնշումների, ուժի կիրառման, ընտրողական մոտեցման դատապարտում, բացասական վերաբերմունք անհանդուրժողականության նկատմամբ:

- **Համավարակի պայմաններում բողոքի ցույցերի և դրանց նկատմամբ իշխանությունների ցուցաբերած վարվելակերպին**²⁷. *կուսակցությունը քննադատում էր իշխանու-*

25. Վարկերի մարման խնդիր ունի վարկառու բնակչության ոչ թե 7%-ը, այլ շատ ավելին, 25.09.20,

<https://www.heritage.am/hy/news/720-250920>

26. Ժողովրդավարական Հայաստանը չի կարող հայտնվել բռնաճնշումների, քաղաքացիական բախումների, վախի և անհանդուրժողականության մթնոլորտում, 14.06.20, <https://www.heritage.am/hy/news/715-140620>

27. Ուժը մշտապես պետք է զուգակցվի օրինականության պահպանման հրամայականի հետ, 13.06.20, <https://www.heritage.am/hy/news/714-130620>

թյուններին, իր կարծիքով, անհամաչափ ուժի կիրառման, անհարկի սահմանափակումների համար:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության կարևորություն, ազգային համաձայնության վրա շեշտադրում:

- **«Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագծին²⁸.** կուսակցությունը գտնում էր, որ «օրենսդրական փոփոխությունն ական է՝ տեղադրված ՀՀ ներքաղաքական դաշտում, այն խախտում է իշխանությունների տարանջատման և հակակշիռների ստեղծման ժողովրդավարական հիմնական սկզբունքը՝ հնարավորություն ստեղծելով մեծամասնություն ունեցող ուժերին օրենքները ծառայեցնել խմբիշխանության պահպանման հատվածական շահերին»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ հեղափոխության արժեքներ, ազգային համաձայնություն, կառավարման համակարգի ժողովրդավարական ընթացք, իշխանությունների տարանջատման և հակակշիռների ինստիտուտ, հանրաքվեի ինստիտուտ հասկացությունների վրա շեշտադրում:

- **Համավարակով պայմանավորված արտակարգ դրությանը²⁹.** կուսակցությունը քննադատում էր իշխանություններին, որ, ըստ իրեն՝ համավարակի դեմ պայքարի համար պատասխանատու մարմինները դրսևորեցին անգործություն: «Ժառանգությունը» պահանջում էր «ՀՀ պարետատան և առողջապահության ոլորտի ղեկավարների հրաժարականն ու հրապարակային բացատրությունը»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ ազգային համաձայնության մթնոլորտ, «հեղափոխության հռչակած նպատակներ», «իշխանության հաշվետու լինելու հիմնարար սկզբունք»:

- **Կառավարության անդամների աշխատավարձերի բարձրացումներին³⁰.** կուսակցությունը քննադատում էր իշխանություններին կառավարության բարձրաստիճան անդամների աշխատավարձերի, իր կարծիքով, անհամաչափ բարձրացման համար:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ հանրային բարիքի արդարացի վերաբաշխում, սոցիալական պետություն, երջանիկ անհատ, հոգատար հանրություն, հզոր պետություն:

28. «Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծն ական է Հայաստանի ժողովրդավարության ճանապարհին, 05.06.20, <https://www.heritage.am/hy/news/713-050620>

29. ՀՀ պարետատան և առողջապահության պատասխանատուները պետք է հաշվետու լինեն և հրաժարական տան, 03.06.20, <https://www.heritage.am/hy/news/712-030620>

30. Առաջ գնանք ազատ, արդար, իրավական և համակարգային բարեփոխումների ճանապարհով, 28.02.20, <https://www.heritage.am/hy/news/704-280220>

- **Սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ խնդրին**³¹. հայտարարության մեջ նշվում էր, որ «ներկայիս իրավիճակում ապրիլի 5-ի սահմանադրական հանրաքվեի թե՛ «այո»-ն, թե՛ «ոչ»-ը բերելու են մեր երկրի համար հատվածական և ոչ լեգիտիմ արդյունքի»: Կուսակցությունն առաջարկում էր Սահմանադիր ժողով գումարել և նոր Սահմանադրություն ընդունել հանրաքվեի միջոցով:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ ազգային-պետական շահ, ժողովրդավարական Սահմանադրության՝ ժողովրդի կողմից ընդունման կարևորում:

- **ՀՀ պետական մարմինները բարենորոգելու անհրաժեշտության վերաբերյալ հարցին**³². կուսակցությունը նշում էր, որ «պետական համակարգը կարևորագույն ոլորտներում տեղապտույտի մեջ է, իսկ հասարակական, քաղաքական փոխըմբռնումը գաղափարակից ուժերի միջև գնալով թուլանում է»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ «ժողովրդավարական, թավշյա և ոչ բռնի հեղափոխության վերջնական հաղթանակ», «ազատ և ժողովրդավարական արժեքներ», «ենթակառուցվածքների ու տարածքների համաչափ զարգացում», հասկացությունների կարևորում, գողական և բակային ենթամշակույթի քննադատություն:

- **Հանքարդյունաբերության և բնապահպանական խնդիրներին**³³. հայտարարությունում նշվում էր, որ որոշ շրջանակներ «առանց մասնագիտական գիտելիքների և տեսական ու գործնական հիմնավորումների՝ հուզագայական կարգախոսներով» փորձ են կատարում «բնության պահպանության ազնիվ առաքելությունը վերածելու անկառավարելի գործընթացի»: Կուսակցությունը նաև նշում էր, որ «պետությունը հապաղում է բավարար և համակարգված քայլեր գործադրել հանքարդյունաբերության և բնապահպանության խնդիրները հանգուցալուծման մասնագիտական մակարդակ տեղափոխելու համար»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ արդյունաբերական ներուժի զարգացում, համերաշխություն, ժողովրդավարական զարգացում, բնության և ազգի առողջության պահպանում, արդյունաբերական Հայաստան:

- **Դատաիրավական բարեփոխումների անհրաժեշտության մասին**³⁴. հայտարարությունում «Ժառանգություն» կուսակցությունը իշխանություններից պահանջում էր «արտա-

31. «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունը. Հայաստանին անհրաժեշտ է Սահմանադիր ժողովի գումարում և նոր Սահմանադրության նախագծի հանրաքվե, 17.02.20, <https://www.heritage.am/hy/news/703-170220>

32. ՀՀ դատական, օրենսդիր և գործադիր մարմինների աշխատանքը հիմնովին բարենորոգելու հրամայականը, 22.01.20, <https://www.heritage.am/hy/news/700-220120>

33. «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունը, 22.08.19, <https://www.heritage.am/hy/news/670-220819>

34. «Ժառանգություն». Անաչառ դատաիրավական բարեփոխումների հրամայականը 22.06.19, <https://www.heritage.am/hy/news/667-220719>

խորհրդարանական քաղաքական ուժերի լայն շրջանակի և հանրության ներգրավմամբ նախաձեռնել սահմանադրական բարեփոխումների անաչառ գործընթաց»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ իշխանությունների տարանջատման և փոխզսպման քաղաքականության անհրաժեշտություն, համակարգային ժողովրդավարական փոփոխությունների կարևորություն:

- ***Հին ուժերի վերադարձի և սահմանադրական կարգի տապալման հնարավոր փորձերի խնդրին***³⁵. *հայտարարությունում նշվում էր, որ կուսակցությունն ակնկալում է «խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական ու հասարակական ուժերի հետ օր առաջ քննարկումների կազմակերպում՝ օրենսդրորեն բացառելու համար հին ուժերի վերադարձը և սահմանադրական կարգի տապալման բոլոր հնարավոր փորձերը»:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ անցումային արդարադատության կարևորություն, հին ուժերի վերադարձը օրենքով բացառում, համերաշխություն:

- ***Քոչարյանի և մյուսների դատավարության վերաբերյալ խնդրին***³⁶. *հայտարարությունում կուսակցությունը քննադատում էր «նոր Հայաստանի գործադիր ու օրենսդիր իշխանությանը, որ վերջինս «չի կարողանում ապահովել այն իրավական համակարգի ձևավորումը, որի դեպքում անհնար կլինի դատական դողերոցքը»:*

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ «հին Հայաստանի», այսինքն՝ ավտորիտար համակարգի քննադատություն, անցումային արդարադատության և լյուստրացիայի կարևորում:

- ***Ընտրական օրենսգրքի բարեփոխման խնդրին***³⁷. *հայտարարությունում «ժառանգությունը» կոչ էր անում արագ քայլեր իրականացնել՝ Ընտրական օրենսգրքի փոփոխություն կատարելու ուղղությամբ, որի արդյունքում «հնարավորինս կնվազեն հնի վերարտադրության իրավաքաղաքական լծակները»:*

Տվյալ հայտարարությունը, անկախ այն հարցից, արդյոք նրանում հիմնավոր է կուսակցության կողմից առաջ քաշվող քննադատությունը, պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ «հին Հայաստանի», այսինքն՝ ավտորիտար համակարգի քննադատություն, անցումային արդարադատության և լյուստրացիայի կարևորում:

35. Օրենսդրորեն բացառնել հին ուժերի վերադարձը
21.05.19, <https://www.heritage.am/hy/news/648-210519>

36. Հայաստանում կառավարման ճգնաժամը վերածվում է անիշխանության, 19.05.19, <https://www.heritage.am/hy/news/647-190519>

37. «ժառանգություն». Ընտրական օրենսգրքի բարեփոխման հրամայականը, 29.04.19 <https://www.heritage.am/hy/news/644-290419>

- **Թավշյա հեղափոխության տարեդարձին**³⁸. կուսակցությունը նշում էր, որ «Ժողովրդի կողմից մերժված իշխանության հիմնական թւերի խաղաղ ճանապարհով հեռացումը» համարում է «պետականության պատմության վճռորոշ հանգրվան»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ կորսված արդարության հաստատում, հասարակական և քաղաքական համերաշխություն, ազատ, անվտանգ միջավայր, ստեղծարար քաղաքացի, հզոր պետականություն:

- **Իշխանությունների կառավարման հետ կապված խնդիրներին**³⁹. հայտարարությունում կուսակցությունը ահազանգում էր, որ, ըստ իրեն, Չայաստանում հաստատվում է միակուսակցական համակարգ, և որ իշխանությունը հաճախ գործում է հին մեթոդներով:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի գաղափարախոսական որոշակի դրույթներ՝ կարևորվում է «ազատ, մենաշնորհներից զերծ, անկախ Չայաստանը», առաջ է քաշվում «հանցավոր վարչակազմի պարտադրանքով կուտակված հարկային և այլ պարտավորությունների մարման տնտեսապես ձեռնտու կանոնների և ժամանակացույցի» մշակման անհրաժեշտության գաղափարը, որպես վտանգավոր երևույթ է նշվում հասարակական անհամերաշխությունը: Որպես կարևոր արժեքներ և նպատակներ են նշվում «երջանիկ անհատի, հոգատար հանրության և հզոր պետության կայացմանը» հասնելը:

«Ժառանգության» հայտարարությունների բացարձակ մեծամասնությունը պարունակում է գաղափարախոսական բնույթի դրույթներ, սակայն հիմնականում բաղկացած է իշխանությունների հասցեին ուղղված քննադատությունից, որոշ դեպքերում առկա են նաև սեփական մոտեցումներ և քաղաքականության առաջարկներ:

Վերլուծության ենթարկած հայտարարություններում առկա են ինչպես սոցիալ-մշակութային, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, որոնք համահունչ են կուսակցության ծրագրում առկա գաղափարախոսական բնույթի դրույթներին: Չայտարարություններում գերիշխում էին սոցիալ-մշակութային բնույթի դրույթներ: «Ժառանգության» ծրագրում որպես դրական երևույթներ, դրական արժեքներ էին նշվել, մասնավորապես՝ սոցիալական արդարությունը, ազգային իրավունքները, սոցիալական շուկան, սոցիալական համերաշխությունը, բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող անհատ ձևավորելու կարևորությունը, ժողովրդավարությունը, ազատականությունը, ազգապահպանությունը: Որպես առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ էին նշվել, մասնավորապես՝ ազգային եկամտի արդար և հասցեական բաշխումը, փոքր և միջին բիզնեսի հարկային բեռի թեթևացումը:

38. «Ժառանգությունը» հավաստում է իր հավատարմությունը նորիայաստանյան պետության գաղափարաբանությանը, 23.04.19, <https://www.heritage.am/hy/news/641-230419>

39. «Ժառանգություն» կուսակցության հայտարարություն, 08.04.19, <https://www.heritage.am/hy/news/637-080419>

Հայտարարություններում առկա այլ դրույթները առնվազն չեն հակասում ծրագրում առկա դրույթներին: Ուստի կարող ենք նշել, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերին վերաբերող մեր ուսումնասիրությունում «Ժառանգության» ծրագրին տրված գաղափարախոսական կողմնորոշման գնահատականը՝ չափավոր-պահպանողականություն և կենտրոնամետություն, համահունչ է հայտարարություններում առկա գաղափարներին:

3.5 «Սասնա ծռեր» կուսակցության հայտարարությունների վերլուծություն

«Սասնա ծռեր» կուսակցությունը հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից առանձնացրել ենք առերևույթ գաղափարախոսական տարրեր ունեցող հայտարարությունները և վերլուծել դրանք: Հայտարարությունները վերլուծելիս չենք անդրադարձել այն հարցին, թե արդյոք անկեղծ է կուսակցությունն իր դիրքորոշումները հայտնելիս, և արդյոք հիմնավոր են դրանցում առկա թեզերը:

«Սասնա ծռեր» կուսակցության այդպիսի հայտարարությունները վերաբերել են՝

- **Ռոբերտ Քոչարյանին կալանքից ազատելուն.** կուսակցությունը քննադատում է Փաշինյանի կառավարությանը, որ վերջինս չի գործում «հեղափոխական տրամաբանությամբ», այլ գործում է «ռեժիմի կեղծ Սահմանադրությամբ» և օրենքներով և «ապագալիս քաղաքական կոնսպեկտներով»: Նշվում է նաև, որ Փաշինյանի իշխանությունը չի կարողանում դիմակայել 5-րդ շարասյան և Կրեմլի ճնշումներին, ինչը, կուսակցության կարծիքով, հղի է «ռևանշի և պետության կազմալուծման վտանգներով»: Սակայն կուսակցությունը նաև նշում էր, որ «Նիկոլ Փաշինյանի իշխանությանն աջակցությունը դեռևս այլընտրանք չունի»⁴⁰, սակայն նա պարտավոր է սթափվել, համախմբել առողջ ուժերին և «արմատական համարժեք քայլեր» կատարել վերոնշյալ վտանգները չեզոքացնելու համար: Հայտարարությունում նաև ասվում է, որ ժողովուրդն է «ազգային հեղափոխության պատվիրատուն»:

Այս հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական տարրեր՝ թավշյա հեղափոխության, այսինքն՝ ժողովրդավարական արժեհամակարգի, ժողովրդավարական արմատական բարեփոխումների հավանություն, ինքնիշխանության կարևորություն և ազգային շեշտադրում:

- **Ապրիլյան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի ստեղծմանը**⁴¹. հայտարարությունում, մասնավորապես, նշվում է, որ խնդիրը համազգային նշանակություն ունի, և այն կարևոր է ազգային ու պետական շահերի երաշխավորման տեսանկյունից: Առաջարկվում է ներգրավել ժիրայր Սեֆիլյանին այդ հանձնաժողովի աշխատանքում, քանի որ վերջինս բացահայտել է այդ պատերազմի «դավադիր բնույթը», տարածքային կորուստները և դրանք քողարկելուն ուղղված Սերժ Սարգսյանի և իր գլխավորած ռեժիմի կեղծիքները:

Այս հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական տարրեր՝ համազգային խնդիրների գոյության մասին շեշտադրում, ազգային և պետական շահ հասկացությունները որպես ոչ հոմանիշ հասկացությունների կիրառում,

40. Նիկոլ Փաշինյանն ու Նրա թիմն ըստ ելույթի անկարող են դիմակայելու 5-րդ շարասյան ու Նրա կրեմլյան տերերի ճնշումներին. «Սասնա ծռեր», 18.05.19, <https://www.aravot.am/2019/05/18/1043936/>

41. Պահանջում ենք ժիրայր Սեֆիլյանին ներգրավել հանձնաժողովի աշխատանքում. «Սասնա ծռեր» 05.06.19, <https://medialab.am/23658/>

ոչ թափանցիկ գործող, կեղծիքներ իրականացնող ռեժիմի վերաբերյալ քննադատություն:

- **Արցախում նախկին ռեժիմի ներկայացուցիչների գործունեությանը**⁴². հայտարարությունում քննադատվում է նրանց «կիսաքրեական բարբերը», խոսվում է այն մասին, որ ճնշումներ են բանեցնում բնակիչների վրա, որպեսզի նրանք գործ չունենան «Սասնա ծռեր» կուսակցության հետ:

Այս հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական տարրեր, քննադատվում են բռնաճնշումները, հակաժողովրդավարական ռեժիմը:

- **Ամուլսարի հանքի շահագործման խնդրին**⁴³. հայտարարությունում քննադատվում էր այն, որ հեղափոխությունից հետո առկա է «ազգադավ» և «ոճրագործ» ռեժիմից ժառանգած օլիգոպոլ տնտեսություն, «բնության գիշատչական շահագործում»: Կուսակցությունը նշում էր, որ իշխանություններն անտեսում են ազդակիր համայնքների ձայնը, հայտարարությունում կարևորվում էր հանքարդյունաբերությանն այլընտրանք գտնելը, վերջնական արդյունքի վրա հիմնված արդյունաբերությունը:

Այս հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի գաղափարախոսական տարրեր, քննադատվում են հակաժողովրդական ռեժիմը, հանքարդյունաբերությունը, օլիգոպոլ տնտեսությունը և բնության շահագործումը:

- **«Սասնա ծռեր» խմբավորման դատավարության հարցին**⁴⁴. հայտարարությունում, մասնավորապես, նշվում էր, որ Նիկոլ Փաշինյանը «ռազմագերի ապստամբներին» ազատելու փոխարեն հանձնել է նրանց նախկին «ռեժիմի գործիքի վերածված դատաիրավական համակարգի հայեցողությանը»:

Այս հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի գաղափարախոսական տարրեր: Կուսակցության տեքստում որպես դրական արժեքներ նշվել են հետևյալ հասկացությունները՝ իրավունք, արժանապատվություն, պետականություն, ազգ, ազգային շահ, հանրային համերաշխություն, ապստամբություն: Տեքստում քննադատվում է նախկին ռեժիմը, որում, ըստ կուսակցության կարծիքի, չկար արդարադատություն:

Հայտարարություններում, բացառությամբ Ամուլսարի խնդրին վերաբերողին, առկա են միայն սոցիալ-մշակութային գաղափարախոսական բնույթի տարրեր, որոնք համահունչ են կուսակ-

42. «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության հաղորդագրությունը, 29.03.19, <https://sasnatzrer.com/newspaper/%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%AB-%D6%84%D5%A1%D5%B7%D5%A1%D5%A9%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF-%D5%B0/>

43. <https://www.facebook.com/sasnatzrer/posts/2251852381578935>

44. Կարևորում ենք Արմեն Բիլյանին և Սմբատ Բարսեղյանին կալանքից ազատելու հարցը. «Սասնա ծռեր» 01.07.19, <https://a1plus.am/hy/article/343277>

ցության ծրագրի գաղափարախոսական բնույթ ունեցող դրույթներին: Կուսակցության ծրագիրը սոցիալ-մշակութային դիտանկյունից մեր կողմից գնահատված է որպես ազգային-պահպանողական բնույթի: Ծրագրում կարևորված են, օրինակ՝ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ ազգային իղձեր, ազգ-բանակ, ազգային ինքնիշխան համահայկական պետություն, հայակենտրոնություն, Հայկական բարձրավանդակի վերատիրում, անմիջական ժողովրդավարություն, մարդու իրավունքներ և ազատություններ, ժողովրդի կամք, ապստամբության իրավունք և այլն:

Ինչպես երևում է վերոնշյալ հայտարարությունների վերլուծությունից, դրանցում առկա գաղափարները համահունչ են ծրագրում առկա դրույթներին կամ առնվազն չեն հակասում դրանց:

Ամուլսարի վերաբերյալ հայտարարությունում առկա են սոցիալ-տնտեսական բնույթ ունեցող գաղափարախոսական բնույթի դրույթներ, որոնք համահունչ են կուսակցության ծրագրում առկա դրույթներին, և որոնք մեր կողմից գնահատվել են որպես չափավոր ձախակալ: Մասնավորապես՝ ծրագրում խոսվում է կանաչ տնտեսության, հասարակական համերաշխության, ուղիղ ժողովրդավարության կարևորության մասին, բացասական երևույթների շարքում նշվում է նախկին «ազգադավ և հանցավոր ռեժիմը», իսկ նպատակների ցանկում նշվում է, օրինակ՝ ռազմավարական ենթակառուցվածքների և օբյեկտների նկատմամբ ազգային վերահսկողության իրականացման անհրաժեշտության մասին: Ելնելով այս ամենից՝ կարող ենք նշել, որ տվյալ հայտարարությունում առկա դրույթները համահունչ են կամ առնվազն չեն հակասում կուսակցության ծրագրում առկա նմանատիպ բնույթի դրույթներին:

3.6 Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) հայտարարությունների վերլուծություն

ՀՀԿ-ն հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից առանձնացրել ենք առերևույթ գաղափարախոսական տարրեր ունեցող հայտարարությունները և վերլուծել դրանք: Հայտարարությունները վերլուծելիս չենք անդրադարձել այն հարցին, թե արդյոք անկէղծ է կուսակցությունն իր դիրքորոշումները հայտնելիս, և արդյոք հիմնավոր են դրանցում առկա թեզերը:

Հայտարարությունները վերաբերում են՝

- **Ղատարանների մուտքերը շրջափակելու Նիկոլ Փաշինյանի կոչին**⁴⁵. ՀՀԿ-ն ղատապարտում էր «Նիկոլ Փաշինյանի կողմից ձեռնարկվող աննախադեպ ճնշումը Հայաստանի Հանրապետության դատական համակարգի վրա»:

Տվյալ հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ հասարակության պառակտման գաղափար և դրա անընդունելիության վերաբերյալ համոզմունք, հանրային համերաշխության մթնոլորտի գաղափար և դրա կարևորում, անհանդուրժողականության անընդունելիություն:

Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ⁴⁶. *կուսակցության փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, ըստ էության, կուսակցության անունից միացել է կոնվենցիայի վավերացման դեմ կազմակերպված «Կամք» ծայրահեղ աջ նախաձեռնության ստորագրահավաքին, նշելով՝ «Հայաստանի հանրապետական կուսակցությունն ազգային պահպանողական կուսակցություն է և չի կարող կողմ լինել Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը, և եթե մենք կողմ լինեինք, մեր իշխանության օրոք վավերացման խնդիրը կբերեինք ԱԺ, բնականաբար դեմ ենք, սա դեմ է մեր ազգային արժեքներին, այստեղ կան դրույթներ, որոնք մտահոգիչ են»:*

Է. Շարմազանովի՝ փաստորեն ՀՀԿ-ի անունից արված հայտարարությունը պարունակում է սոցիալ-մշակութային բնույթի որոշակի գաղափարախոսական դրույթներ՝ հայկական ավանդական արժեքների կարևորում, «սոցիալական սեռ» հասկացության վերաբերյալ ծայրահեղ բացասական վերաբերմունք, ազգային արժեքների գաղափար և դրա կարևորություն, պահպանողականություն:

ՀՀԿ-ի հայտարարությունների բացարձակ մեծամասնությունը չի պարունակում գաղափարախոսական բնույթի որևէ դրույթ և հիմնականում բաղկացած է իշխանությունների հասցեին ուղղված խիստ քննադատությունից:

45. Հայաստանի հանրապետական կուսակցությունը ՀՀ վարչապետի կոչի կապակցությամբ հանդես է եկել հայտարարությամբ, 20.05.19, <https://armeniasputnik.am/politics/20190520/18686245/hhk-n-koch-e-anum-joxovrdin-zerc-mnal-pashinyani-koxmic-hrahrvox-gryntacnerin-masnkaceluc.html>

46. «ՀՀԿ-ն ազգային պահպանողական կուսակցություն է և չի կարող կողմ լինել Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը». Էդուարդ Շարմազանով, 25.07.19, <http://www.hhk.am/hy/news/item/2019/07/25/sharmazanov-konvencional>

Վերլուծության ենթարկված երկու հայտարարություններում էլ առկա են միայն սոցիալ-մշակութային բնույթի դրույթներ, որոնք համահունչ են կուսակցության ծրագրում առկա սոցիալ-մշակութային բնույթի հետևյալ դրույթներին՝ ազգ-բանակ, ավանդական ընտանիքի արժեքներ: Հայտարարություններում առկա այլ, չափազանց սակավ դրույթները առնվազն չեն հակասում ծրագրում առկա դրույթներին: Ուստի կարող ենք նշել, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերին վերաբերող մեր ուսումնասիրությունում ՀՀԿ-ի ծրագրին տրված գաղափարախոսական կողմնորոշման գնահատականը՝ ազգային-պահպանողականություն, համահունչ է հայտարարություններում առկա գաղափարներին:

4

Ամփոփում

Կուսակցությունների հրապարակային գործունեության (խորհրդարանականների դեպքում՝ օրինագծերի վերաբերյալ քվեարկությունը, իսկ արտախորհրդարանականների դեպքում՝ հայտարարությունները) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում գերիշխում է գաղափարախոսական կողմնորոշում չպահանջող բաղադրիչը:

Խորհրդարանական ուժերից երկուսի՝ «Բարգավաճ Հայաստանի» և «Լուսավոր Հայաստանի» քվեարկությունների վերլուծությունը հիմք է տալիս մեկ միավորով տեղաշարժել նրանց դեպի ավելի պահպանողական դաշտ՝ ի համեմատ նրանց ծրագրերի ուսումնասիրման արդյունքում քաղաքական գաղափարախոսությունների սպեկտրում նրանց տեղակայման: Սակայն նրանց ծրագրերում առկա գաղափարախոսական դրույթներին տրված մեր ընդհանուր գնահատականները վերաբերելի են նաև նրանց քվեարկություններին: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործունեության և իր ծրագրում առկա դրույթների մասով որևէ անհամապատասխանության մասին վկայող փաստ չի բացահայտվել: Այսպիսով՝ ԶԳ-ի, ԲՀԿ-ի և ԼՀԿ-ի գաղափարախոսական դրույթներին տրված մեր գնահատականը մնում է անփոփոխ, այսինքն՝ ԶԳ-ն առավել մոտ է աջ կենտրոնամետությանը և չափավոր ազատականությանը, ԲՀԿ-ն առավել մոտ է ձախ կենտրոնամետությանը և ռադիկալ պահպանողականությանը, ԼՀԿ-ն առավել մոտ է ձախ կենտրոնամետությանը և չափավոր պահպանողականությանը:

Ուշագրավ փաստ է, որ մեր կողմից որպես գաղափարախոսական բնույթ ունեցող գնահատված օրինագծերի բացարձակ մեծամասնությունը կառավարության կամ կառավարող ուժի օրենսդրական նախաձեռնություններն են:

Արտախորհրդարանական ուժերի մասով՝ այդ կուսակցությունների պաշտոնական հայտարարությունների ուսումնասիրումը ցույց տվեց, որ դրանք հիմնականում համապատասխանում են իրենց ծրագրերի գաղափարախոսական բնույթի դրույթներին տրված մեր գնահատականներին: Այսպիսով՝ ՀԱԿ-ը առավել մոտ է աջ կենտրոնամետությանը, որը ձգտում է դեպի ավելի կենտրոն և չափավոր ազատականություն, «Ժառանգություն» առավել մոտ է ձախ կենտրոնամետությանը և չափավոր պահպանողականությանը, «Սասնա ծռեր» կուսակցությունն առավել մոտ է ձախ կենտրոնամետությանը և ռադիկալ պահպանողականությանը, ՀՀԴ-ին բնորոշ են վառ ընդգծված ձախ կենտրոնամետությունը և ռադիկալ պահպանողականությունը, ՀՀԿ-ն առավել մոտ է աջ կենտրոնամետությանը և ռադիկալ պահպանողականությանը, ԶՅԴ-ին բնորոշ են վառ ընդգծված ձախ կենտրոնամետությունը և չափավոր ազատականությունը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, որ արտախորհրդարանական ուժերի գործունեությունը արտահայտվում է մեծ մասամբ հայտարարություններ անելով, որոնց ծավալը, որպես կանոն, չի անցնում երկու էջը: Համեմատաբար մեծ ծավալի դիտարկումներ և առաջարկություններ են արվել կառավարության ծրագրի վերաբերյալ, այն էլ՝ ընդամենը մի քանի ուժի կողմից: Կուսակցությունների հայտարարությունների քանակը, հետազոտության ենթակա եր-

կու տարի ընդգրկող ժամանակահատվածում, միջինը տասից ավելի է եղել և չի գերազանցել քսանը:

Հայտարարությունների մեծ մասը իշխանությունների հասցեին քննադատություն է: Հարկ է նաև նշել, որ հրապարակային տիրույթում հետազոտված արտախորհրդարանական ոչ մի կուսակցություն հանդես չի եկել որևէ օրենսդրական նախաձեռնությամբ, չի ներկայացրել քաղաքականությունների որևէ այլընտրանքային փաստաթուղթ (*սա իհարկե չի բացառում այլ, ոչ հրապարակային խողովակներով նման գործունեության իրականացումը, ինչի ուսումնասիրումը, սակայն, մեր հետազոտության շրջանակներից դուրս է*):

Հարկ է նշել, որ արտախորհրդարանական կուսակցությունների հայտարարությունները վերաբերել են խիստ սահմանափակ թվով թեմաների, ինչը ցույց է տալիս, որ կուսակցությունները ընտրական փուլերից դուրս բազմաթիվ կարևորագույն հրատապ հարցերի վերաբերյալ չեն հնչեցնում որևէ ինստիտուցիոնալ դիրքորոշում:

Խորհրդարանական ուժերի՝ մեր կողմից որպես գաղափարախոսական տարրեր պարունակող գնահատված օրինագծերի վերաբերյալ քվեարկությունները վերաբերել են հետևյալ թեմաներին՝

- կառավարության կառուցվածքի օպտիմալացում.
- համահարթ հարկման համակարգի ներմուծում.
- տեղական հանրաքվեի ինստիտուտի ներդրում.
- ծխախոտի ծխից պաշտպանություն.
- հասարակական կազմակերպությունների հաշվետվողականության խնդիր.
- Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության ստուգման ինստիտուտի հիմնադրում.
- ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի հիմնադրում.
- Լանգարոտեի կոնվենցիայի վավերացում.
- շքեղության հարկի ներդրում.
- հասցեական և արդյունավետ սոցիալական աջակցության խնդիր.
- հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծում:

Կուսակցությունների կողմից արժարծվող սահմանափակ թվով թեմաները, նրանց հայտարարությունների քանակը և ծավալը թույլ չեն տալիս լիարժեք բացահայտել վերջիններիս գաղափարախոսական կողմնորոշումը:

Գրանցվել են դեպքեր, երբ կոնկրետ թեմայի վերաբերյալ առկա են եղել երկու և ավելի կուսակցությունների դիրքորոշումներ: Այդ հայտարարությունները վերաբերել են հետևյալ թեմաներին (*փակագծերում նշվել են այդ թեմաներին անդրադարձած կուսակցությունների անվանումները*)՝

- Սահմանադրական դատարանի խնդիր, սահմանադրական հանրաքվեի հարց (ԶՈ, ՀԱԿ, «Ժառանգություն»).
- Ամուլսարի հարց, բնապահպանական խնդիրներ (ԶՈ, ՀԱԿ, «Ժառանգություն»).

- ներքաղաքական լարված իրավիճակ, իշխանությունների կառավարման գնահատականներ (ԶՈ, ԶՅԴ, ԶԱԿ, «Ժառանգություն, «Սասնա ծռեր», ԶԶԿ)։
- համահարթ հարկատեսակի ներմուծում (ԶՈ, ԶՅԴ)։
- Գազիկ Ծառուկյանի և ԲԶԿ այլ անդամների նկատմամբ քրեական հետապնդման հետ կապված հարց («Ժառանգություն», ԶՅԴ)։
- դատարանների մուտքերը և ելքերը արգելափակելու հարց (ԶԶԿ, ԶՅԴ)։
- կորոնավիրուսի հետևանքների, արտակարգ դրությանը վերաբերող քաղաքականություն («Ժառանգություն», ԶՅԴ)։
- Զոչարյանի և մյուսների դատավարության խնդիր («Ժառանգություն», ԶՅԴ)։
- դատաիրավական բարեփոխումների հարց («Ժառանգություն», ԶԱԿ, ԶՈ)։
- Նոր Ընտրական օրենսգրքի ընդունման անհրաժեշտության մասին (ԶԱԿ, «Ժառանգություն»)։
- հին ուժերի վերադարձի, նախկին ռեժիմին գնահատական տալու հարց («Ժառանգություն», ԶՈ)։

Չեղարկված արտախորհրդարանական կուսակցությունների հայտարարությունների եզակի, չկրկնվող թեմաներն են *(փակագծերում նշվել են այդ թեմաներին անդրադարձած կուսակցությունների անվանումները)*

- Գազիկ Ծառուկյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու անհրաժեշտությանը նրա ենթադրյալ բիզնես գործունեության պատճառով (ԶՈ)։
- Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի պանթեոնը պղծելու փաստի հարց (ԶՅԴ)։
- Հայ Առաքելական Եկեղեցու դեմ ենթադրյալ արշավի մասին (ԶՅԴ)։
- բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության մասին (ԶԱԿ)։
- ակտիվիստ Վարդան Հարությունյանի վրա հարձակման վերաբերյալ (ԶԱԿ)։
- Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ (ԶԶԿ)։
- Ապրիլյան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի վերաբերյալ («Սասնա ծռեր»)։
- Արցախում նախկին ռեժիմի գործունեության վերաբերյալ («Սասնա ծռեր»)։
- «Սասնա ծռեր» խմբավորման դատավարության մասին («Սասնա ծռեր»)։
- վարկատու կազմակերպությունների հետ կապված խնդրի վերաբերյալ («Ժառանգություն»)։
- կառավարության անդամների աշխատավարձերի բարձրացման հարցի վերաբերյալ («Ժառանգություն»)։
- ԶԶ պետական մարմինները բարենորոգելու խնդրի վերաբերյալ («Ժառանգություն»)։

Ուշագրավ փաստ է, որ մեր կողմից որպես գաղափարախոսական երանգներ ունեցող գնահատված թեմաների վերաբերյալ քվեարկված օրինագծերից միայն երեքի՝ կառավարության կառուցվածքի օպտիմալացում, համահարթ հարկման համակարգի ներմուծում և Լանգարոտի կոնվենցիայի վավերացում, վերաբերյալ է, որ արտախորհրդարանական ուժերից գոնե մեկը դիրքորոշում է հայտնել։



political
dialogue



**National Endowment
for Democracy**

Supporting freedom around the world

Սույն հետազոտությունը պատրաստվել է
«Զաղաքական երկխոսություն» կազմակերպության
նախաձեռնությամբ և
«Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի»
ֆինանսական աջակցությամբ



political
dialogue

